ՏԵՂԵԿԱՆՔ

ԱՀ-ում սեպտեմբեր ամսում երրորդ տասնօրյակում դիտված օդերևութաբանական պայմանների վերաբերյալ

Սեպտեմբերի 25-ին առանձին շրջաններում դիտվել են տեղումներ: Տեղումների գումարային առավելագույն քանակը կազմել է Մարտակերտում՝ 15 մմ, Ստեփանակերտում՝ 2 մմ, Ասկերանում՝ 1մմ:

Օդի միջին տասնօրյակային ջերմաստիճանը Ստեփանակերտում եղել է +20.1^{0}C, նորմայից բարձր 5.1 ^{0}C-ով, Ասկերանում՝20.5^{0}C, Մարտունիում՝ 21.2^{0}C նորմայից բարձր 3.5^{0}C-ով, Մարտակերտում՝ 23.0^{0}C:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է սեպտեմբերի 21-ին և 28-ին՝ +29...+33^{0}C:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է սեպտեմբերի 26-27-ին ՝ +11... +13^{0}C:

Սեպտեմբերի 23-25-ին դիտվել է քամու ուժգնացում, պոռթկումները մինչև՝ 10-13 մ/վրկ արագությամբ:

Սեպտեմբերի երրորդ տասնօրյակում օդի միջին հարաբերական խոնավությունը կազմել է Ստեփանակերտում և Ասկերանում՝ 61-62%, Մարտունիում՝ 59%:

ԱՀ-ում 2022թ. սեպտեմբեր ամսում դիտված օդերևութաբանական պայմանների վերաբերյալ

Սեպտեմբեր ամսում դիտվել է քիչ տեղումներով , նորմայից բարձր ջերմաստիճանով եղանակ:

Տեղումների ամսվա գումարային քանակը կազմել է Ասկերանում՝ 5մմ, նորմայի 13%, Ստեփանակերտում՝8 մմ, նորմայի 21%, Մարտունիում 10 մմ, նորմայի 26%, Մարտակերտում 21 մմ, նորմայի 66%, կամ Ասկերանում, Ստեփանակերտում 1-3 մմ-ով և Մարտունիում 48 մմ-ով քիչ, Մարտակերտում 13 մմ-ով ավել, քան 2021թ-ին:

Օդի միջին ամսական ջերմաստիճանը կազմել է. նախալեռնային շրջաններում՝+20.8...+21.7^{0}C, որը բարձր է նորմայից +2.7-3.1^{0}C-ով, հովտային շրջաններում՝+22.3...+24.0^{0}C, նորմայից բարձր՝ 2.6–3.2^{0}C-ով կամ 0.2-1.8^{0}C–ով բարձր, քան 2021թվականին:

Օդի ամենաբարձր ջերմաստիճանը հանրապետության տարածքում դիտվել է սեպտեմբերի 2-3-ին. նախալեռնային շրջաններում +34...+36^{0}C, հովտային շրջաններում՝+36... +39^0:

Օդի ամենացածր ջերմաստիճանը դիտվել է սեպտեմբերի 26-28-ին՝ +11...+13 ^{0}C:

Ստեփանակերտում, Ասկերանում և Մարտունիում հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը իջել է մինչև +10.... +13^{0}C, առավելագույնը բարձրացել է մինչև՝ +47....+59^{0}C:

Սեպտեմբեր ամսվա քամու միջին արագությունը կազմել է 2-3մ/վրկ, առանձին օրեր դիտվել է քամու ուժգնացում, պոռթկումները մինչև՝ 10-13 մ/վրկ արագությամբ:

Ստեփանակերտում, Ասկերանում և Մարտունիում սեպտեմբեր ամսում օդի միջին հարաբերական խոնավությունը կազմել է 59-62%, նորման Ստեփանակերտում՝ 68%: